

Պետության կողմից «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին

ք. Երևան

08.01. 2018թ.

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. ԱՐՇԱԿՅԱՆԻ (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով 2017 թվականի դեկտեմբերի 28-ի <<<< 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> թիվ 1717-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1720-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), «Աջակցություն Հայաստանի Հանրապետության պետական նշանակության ավտոճանապարհների և ինժեներական կառույցների պահպանման և հեռանկարային զարգացման քաղաքականության մշակման» 2018 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ նախատեսված՝ 218,088,900 դրամ գումար (երկու հարյուր տասնութ միլիոն ութսունութ հազար ինը հարյուր)՝ առանց ԱԱՀ-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. գործունեության արդյունքների վերաբերյալ ներկայացված եռամսյակային և տարեկան հաշվետվությունները քննարկել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը: Նշված ընթացքում չծանուցելու դեպքում՝ հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով.

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին եռամսյա հաշվետվություն՝ մինչև եռամսյակի վերջին ամսվա հաջորդող ամսվա 25-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն՝ ավարտից հետո 30 օրվա ընթացքում.

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Կազմակերպության միջոցառումները իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումները իրականացվում են ամսեկան՝ կանախավճարային ձևով, յուրաքնչյուր ամսվա առաջին տասն աշխատանքային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմինն փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ տույժերը՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ


8.1. Միջոցառումների ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:


8.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.3. Պայմանագիրը կնքվում է 2 /երկու/ օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.4. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


Վ. ԳԻՅԱՐՅԱՆ
«Հայաստանի հասարակական կազմակերպության զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն
Ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 3/3
Հ/հ 900011001121
ՀՎՀՀ 02565518


Վ. ԳԻՅԱՆ
«Հայաստանի ավրոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ
Ք. Երևան, Նալբանդյան փ. 28
Հ/հ 1930000453390100
ՀՎՀՀ 01506808

Մ Ի Զ Ո Ց Ա Ռ Ռ Մ Ն Ե Ր

NN Ո/Կ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1	Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհային ցանցի զարգացման ու դրանց նպատակային օգտագործման, պահպանման և հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման նպատակով պետական քաղաքականության մշակման աշխատանքներին օժանդակություն, այդ թվում					105 217 626
1.1	Ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների ծածկի վիճակի տեխնիկական տվյալների հավաքագրում (շուրջ 1600կմ), այդ թվում միջպետական ճանապարհների համար դեֆլեկտոմետրով	Առկա ծածկի վիճակի դիտարկում	Ծածկի թերությունների չափագրում	Վերականգնման ծրագրի մշակման անհրաժեշտ մուտքային տվյալների ստացում	29.12.2018	23 708 743
1.2	Երթևեկության ինտենսիվության չափումներ և վերլուծություն (102 հաշվեկետ, 118 այցելություն)	Երթևեկության ինտենսիվության չափում	Երթևեկության ինտենսիվության չափում	Վերականգնման ծրագրի մշակման անհրաժեշտ մուտքային տվյալների ստացում	29.12.2018	18 050 718
1.3	Աջակցություն պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների (միջպետական և հանրապետական) վերակառուցման, վերականգնման և հիմնանորոգման ծրագրերի մշակմանը, ավտոմոբիլային ճանապարհների, թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի մշակում	Ա/ճանապարհների վերականգնողական ծրագրերի մշակում	Ուսումնասիրությունների և հետազոտությունների վերլուծություն, տնտեսագիտական վերլուծական ծրագրերի կիրառում	Վերականգնման առաջարկվող ճանապարհների, թունելների, արգելափակոցների և այլ արհեստական կառուցվածքներ ցանկի ներկայացում	29.12.2018	46 386 647

1.4	Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում	Ճանապարհային երթևեկության կազմակերպման ուսումնասիրություն	Ճանապարհների նախագծերի ուսումնասիրություն, շին. աշխատանքների վերհսկում, ՃՏՊ վերլուծում	Ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավում	29.12.2018	17 071 518
2	Ավտոմոբիլային ճանապարհների և դրանց ինժեներական կառույցների (կամուրջներ, թունելներ և մետ. արգելափակույցներ) վիճակի պարբերական ուսումնասիրությունների իրականացում, տեխնիկապես հիմնավորված վերականգնողական միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում և կապալառու կազմակերպությունների աշխատանքի դիտարկում և գնահատում, այդ թվում					92 280 890
2.1	Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային (3043կմ) և ընթացիկ ձմեռային (3547կմ) պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում	Ճանապարհային ցանցի ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների տեխնիկական հսկողություն	Ա/ճանապարհները սպասարկող կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների հսկողություն և եզրակացությունների ներկայացում	Ճանապարհային ցանցի սպասարկման արդյունավետության բարձրացում	29.12.2018	48 869 495
	Ավտոմոբիլային ճանապարհների վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով	Ավտոմոբիլային ճանապարհների գնահատում	Ավտոմոբիլային ճանապարհների ցանցի վիճակի ուսումնասիրություն	Հաջորդ տարվա ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և սպասարկման աշխատանքների պլանի ներկայացում		

2.2	Կատարված աշխատանքների ընդունման նպատակով ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և պարսպող համակարգերի (549450մ) (մետ. արգելափակուցներ) պահպանման աշխատանքների պարբերական դիտարկում և գնահատում	Թունելների, կամուրջների և մետաղական արգելափակուցների պահպանման աշխատանքների հսկողություն	Սպասարկող կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների հսկողություն և եզրակացությունների ներկայացում	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի սպասարկման արդյունավետության բարձրացում	29.12.2018	28 803 127
	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի գնահատում՝ հաջորդ տարվա պահպանման և սպասարկման պլանի կազմման նպատակով	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի գնահատում	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի վիճակի ուսմնասիրություն	Թունելների, կամուրջների և պարսպող համակարգերի պահպանման և սպասարկման աշխատանքների պլանի ներկայացում		
2.3	Միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող և առանձին պահպանման չհանձնված թունելների և կամուրջների տեխնիկական վիճակի պարբերաբար դիտարկում և գնահատում	Թունելների և կամուրջների պահպանման աշխատանքների հսկողություն	Սպասարկող կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների հսկողություն և եզրակացությունների ներկայացում	Թունելների և կամուրջների սպասարկման արդյունավետության բարձրացում	29.12.2018	14 608 268

3	Առանձին հանձնարարականների դեպքում լաբորատոր փորձարկումների իրականացում՝ ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և կառուցված ճանապարհային ծածկի որակական հատկանիշների ստուգման նպատակով	Ճանապարհաշինության ոլորտում օգտագործվող շինարարական նյութերի և կառուցված ճանապարհային ծածկի լաբորատոր փորձարկումներ	Շինարարական նյութերի և կառուցված ճանապարհային ծածկի որակական հատկանիշների հսկողություն և եզրակացությունների ներկայացում	Շինարարական աշխատանքների որակի բարձրացում	29.12.2018	20 590 384
---	---	---	---	---	------------	------------

Ընդամենը	218 088 900
----------	-------------

Ս. Արշակյան

Ս. ԱՐՇԱԿՅԱՆ

ՀՀ Կոնստրուկտիվ տեխնիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
 Թ. Երևան, Գ. Արաբյան փ. 3/3
 ՀՀ ՖԵՍՍ գործառնական վարչություն
 h/h 900011001121
 ՀՎՀՀ 02565518

Ա. Արշակյան

Ա. ԱՐՇԱԿՅԱՆ

«Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ
 ք. Երևան, Նալբանդյան փ. 28
 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
 h/h 1930000453390100
 ՀՎՀՀ 01506808